

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՎԱՀԵ ՀԱԿՈՐՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՎԵՐՋԻՆ ԴԱՍԻ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ շրջանավարտներ

Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ՝ ձեր կյանքի կարևոր փուլերից մեկի ավարտն ազդարարող և նոր՝ հասուն կյանքի սկիզբն ավետող վերջին դասի կապակցությամբ:

Այս օրը, երբ իրար են միահյուսվել թախիծն ու ուրախությունը, ուսումնառության անհոգ ու լուսավոր տարիների վերապրումներն ու ապագայի ծրագրերի իրականացման մտահոգությունները, երբեք դուրս չի մղվելու ձեր հիշողությունից և դեռ երկար ժամանակ դրական լիցքերով ուղեկցելու է ձեզ:

Վստահ եմ, յուրաքանչյուրիդ համար դպրոցը եղել է ոչ միայն գիտելիքի, այլև հայեցի դաստիարակության, ազգային արժեքների պահպանման, ձեր ինքնադրսևորման և ինքնահաստատման հենք ստեղծած հարազատ օջախ:

Դուք եք մեր երկրի վաղվա տերերը և համոզված եմ, որ ունեք բավարար հաստատակամություն ու վճռականություն՝ հաղթահարելու մեր առաջընթացը խաթարող ցանկացած արգելք:

Ցանկանում եմ շնորհավորել ու երախտագիտության խոսքս ուղղել նաև ծնողներին և ուսուցիչներին՝ մարդ, քաղաքացի ու հայրենյաց պաշտպան դաստիարակելու գործում իրենց անմնացորդ նվիրումի համար:

Սիրելի՛ շրջանավարտներ, կրկին շնորհավորում եմ ձեզ այս հրաշալի օրվա կապակցությամբ, մաղթում սեր, երջանկություն և բոլոր նպատակների իրականացում:

ՀՀ Սյունիքի մարզպետ Վ. Հակոբյան